ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 588 – Ա **19 նոյեմբերի 2019 թ.**

2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՆՔ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման ու ենթակառուցվածքների նախարարի 2019 թվականի նոյեմբերի 15-ի N 01/15.1/19937-19 և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2019 թվականի նոյեմբերի 11-ի N 11.1.1/7990-2019 գրությունները

որոշում եմ՝

1. 2019 թվականի դեկտեմբերի 9-ին ժամը 11^{00} –ին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի վարչական շենքում իմ ղեկավարությամբ անցկացնել <<Տարահանման իրականացում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի վարչական շենքից>> թեմայով ուսումնական վարժանք-գործնական միջոցառում՝ նվիրված 1988 թվականի Սպիտակի երկրաշարժի զոհերի հիշատակին:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի վարիչ Տիգրան Հակոբյանին՝ կազմակերպել 2019 թվականի դեկտեմբերի 9-ին մարզպետարանում անցկացվելիք միջոցառման նախապատրաստման ու անցկացման աշխատանքները և 2019 թվականի դեկտեմբերի 6-ին զեկուցել պատրաստ լինելու մասին:

3. ՈՒսումնական վարժանք-միջոցառմանն ընդգրկել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի և <<Հայաստանի ազգային արխիվ>> ՊՈԱԿ-ի Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման անձնակազմերին, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության օպերատիվ խմբին, Գավառի հրշեջ փրկարարական ջոկատի մեկ մարտական հաշվարկ և <<Գավառի բժշկական կենտրոն>> ՓԲԸ աղետների բժշկության խմբին:

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար Սևակ Խլղաթյանին՝ մարզպետարանի անձնակազմին տեղեկացնել 2019 թվականի դեկտեմբերի 9-ին մարզպետարանում անցկացվող միջոցառման մասին և նախապատրաստել գործնական վարժանքներին:

5. Հաստատել՝

1) ուսումնավարժանքի նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) ուսումնավարժանքի անցկացման պլանը՝ համաձայն հավելված N 2-ի.

3) ուսումնավարժանքի մտահղացման բացատրագիրը՝ համաձայն հավելված N 3-ի

6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Նարեկ Գրիգորյանին:

19.11.2019

ՄԱՐԶՊԵՏ՝
Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
Digitally signed by SANOSYAN GNEL 1710830069

Ք. Գավառ

Հավելված N1

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2019թ. նոյեմբերի 19-ի
N 588-Ա որոշման

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետները	Պատասխանատու կատարողներ	Նշումներ կատարման մասին
1	2	3	4	5
Փաստաթղթերի մշակում				
1	Ելակետային տվյալների որոշում՝ թեմա, անցկացման ժամկետ, վայր, անցկացման պլանի կազմում	Մինչև 18.11.2019թ.	Մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի վարիչ	
2	Անցկացման մասին որոշման պատրաստում և հաստատման ներկայացում	Մինչև 18.11.2019թ.	Մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի վարիչ	
3.	ՈՒսումնական վարժանքի անցկացման մասին իրազեկում մասնակիցներին	20.11.2019թ.	Մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի վարիչ	
Ղեկավար կազմի նախապատրաստում				
4	ՈՒսումնական վարժանքի կազմակերպման և անցկացման փաստաթղթերի ուսումնասիրում	Մինչև 05.12.2019թ.	Գեղարքունիքի մարզպետի խորհրդական	
5	«ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակչության տարահանման» պլանի ուսումնասիրություն,ճշգրտումներ	Մինչև 05.12.2019թ.	Մարզի բնակչության տարահանման հանձնաժողով	
Ուսուցանվողների նախապատրաստումը				
6	Մարզպետարանի անձնակազմի,շենքում գործող այլ կազմակերպությունների աշխատակիցների ուսուցանում,գործողությունների լուսաբանում	Մինչև 06.12.2019թ.	Գեղարքունիքի մարզպետի խորհրդական, զորահավաքային նախապատրաստության բաժնի վարիչ	

7	ՀՓՋ և աղետների բժշկության խմբին ուսումնական վարժանքի գործողությունների լուսաբանում	Մինչև 02.12.2019թ.	ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ, մարզպետարանի ԱՍԱ վարչություն	
Ուսումնավարժության վայրի նախապատրաստում				
8	Ուսումնավարժության վայրի տեղազննում,ուղղորդող սլաքների,մուտքերի ու ելքերի պատրաստում	Մինչև 06.12.2019թ.	Մարզպետարանի գլխավոր քարտուղար	

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

18.11.2019

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝
ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2019թ. նոյեմբերի 19-ի
N 588-Ա որոշման

ՊԼԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՆՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

Վարժանքի թեման՝«Տարահանման իրականացում Գեղարքունիքի մարզպետարանի վարչական շենքից»

Ուսումնական նպատակները՝

1. Վարժանքի ընթացքում ստուգել և կատարելագործել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի,ՀՀ ԱԻՆ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության Գավառի հրշեջ փրկարարական ջոկատի, "Գավառի բժշկական կենտրոն" ՓԲԸ -ի և "Հայաստանի ազգային արխիվ" ՊՈԱԿ-ի Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման անձնակազմերի ունակությունները՝ տարահանման կազմակերպման,վիրավորների տարահանման, առաջին բուժօգնության կազմակերպման,մարտավարական և փրկարարական խնդիրների լուծման ուղղությամբ:

2. Կատարելագործել մասնակիցների կազմակերպչական և գործնական ունակությունները տարահանման միջոցառումների ժամանակ:

Վարժանքի մասնակիցների կազմը՝ Գեղարքունիքի մարզպետարանի և "Հայաստանի ազգային արխիվ" ՊՈԱԿ-ի Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման անձնակազմեր , ՀՀ ԱԻՆ Գեղարքունիքի ՄՓՎ օպերատիվ խումբ,Գավառի թիվ 31 ՀՓՋ-ի 1 մարտական հաշվարկ, "Գավառի բժշկական կենտրոն" ՓԲԸ աղետների բժշկության խումբ:

Վարժանքի անցկացման օրը և ժամը՝ 11^{00} - 11^{50} 09.12.2019թ.

Վարժանքի անցկացման վայրը՝ ք. Գավառ,Գեղարքունիքի մարզպետարանի վարչական շենք,շենքին հարակից հրապարակ:

Նյութատեխնիկական ապահովումը՝ Հրշեջ փրկարարական ջոկատի մարտական հաշվարկի հրշեջ ավտոմոբիլ, հրշեջ տեխ. զինվածություն, սարքավորումներ, ձեռքի ռադիոկայաններ,շտապ բուժօգնության 1 ավտոմեքենա:

Ելակետային տվյալներ

Վարչական շենքը չորսհարկանի/նկուղային հարկով, քարաշեն, երկաթբետոնյա ծածկով շինություն է: Շենքում ամեն օր գտնվում է 130 մարդ:Տարահանում իրականացնելու համար առկա է երկու ելք,աստիճանավանդակները կառուցված են այդ ելքերի ուղղությամբ:

Վարժանքի անցկացման կարգը

Ժամը	Ուսումնական հարցերը	Ստեղծված իրավիճակը	ՈՒսուցանվողների գործողությունները	ՈՒսումնավարժության ղեկավարի գործողությունները
1		2	3	4
11:00	Ահազանգում:	Գավառ քաղաքում գրանցվել է ստորգետնյա ցնցում՝5 բալ ուժգնությամբ:	Յուրաքանչյուր աշխատակից ըստ ելքի սլաքների,լքում է շենքը:	Հսկում է տարահանվողների գործողությունները:
11:05	Ստորաբաժանումների ղեկավարները ստուգում են անձնակազմի ներկայությունը և զեկուցում ՀՀ Գեղարքունիքի մարզպետին:	Երկու աշխատակից չեն կարողացել դուրս գալ շենքից:	Ճշտվում են բացակա անձանց ինքնությունն ու գտնվելու հարկը:	Ընդունում է զեկույցները և տալիս է հետախուզություն կազմակերպելու հանձնարարական:
11:15	Հետախուզում, իրավիճակի գնահատում:	Ճշտվում է,որ բացականերից երկուսը չեն հասցրել դուրս գալ և գտնվում են 205 և 211 սենյակներում:	Գավառի ՀՓՋ անձնակազմը իրականացնում է փրկարարական գործողություններ,երկու	Ընդունում է հետախուզության տվյալները և ընդունում որոշում՝ փրկարար հաշվարկ ներգրավելու ուղղությամբ:

			վիրավորներին մոտեցնում են շտապ բուժօգնության մեքենային:	
11:30 11:50	Առաջին օգնության կազմակերպում:	Շենքում մնացած անձանցից մեկը ունի ստորին վերջույթների կոտրվածք ,մեկը՝ արյունահոսություն՝ գլխի հատվածում:	Աղետների բժշկության խումբը իրականացնում է համապատասխան գործողություններ:	Տեղում հետևում է ստեղծված իրավիճակին և գործողությունների ընթացքին:
	Գործողությունների ավարտ:	Ըստ սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության տվյալների,ստորգետնյա ցնցումները դադարել են:	Փրկարարները և աղետների բժշկության խումբը զեկուցում է կատարված աշխատանքների մասին:	Ուսումնավարժանքի ղեկավարը ընդունում է զեկույցները,տալիս գնահատական, հայտարարում վարժանքի ավարտի մասին և կազմակերպում է՝մեկ րոպե լռությամբ հարգել 1988թ.երկրաշարժի զոհերի հիշատակը:

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

18.11.2019

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝
ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Digitally signed by KHLGHATYAN SEVAK 4007580049

Հավելված N 3
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2019թ. նոյեմբերի 19-ի
N 588-Ա որոշման

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՆՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄՏԱՀՂԱՑՄԱՆ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Վարժանքի թեման՝«Տարահանման իրականացում Գեղարքունիքի մարզպետարանի վարչական շենքից»

Անցկացման ժամկետը 2019թ. 09 դեկտեմբեր.ժամը 11^{00}-12^{00}

Անցկացման վայրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի վարչական շենք

Ընդգրկվող մասնակիցները՝ Գեղարքունիքի մարզպետարանի և ''Հայաստանի ազգային արխիվ'' ՊՈԱԿ-ի Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման անձնակազմեր , ՀՀ ԱԻՆ Գեղարքունիքի ՄՓՎ օպերատիվ խումբ,Գավառի թիվ 31 ՀՓՋ-ի 1 մարտական հաշվարկ, ''Գավառի բժշկական կենտրոն'' ՓԲԸ աղետների բժշկության խումբ:

ՈՒսումնական նպատակները՝

1.Վարժանքի ընթացքում ստուգել և կատարելագործել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի,ՀՀ ԱԻՆ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության Գավառի հրշեջ փրկարարական ջոկատի և ''Գավառի բժշկական կենտրոն'' ՓԲԸ -ի անձնակազմերի ունակությունները՝ տարահանման կազմակերպման,վիրավորների տարահանման, առաջին բուժօգնության կազմակերպման,մարտավարական և փրկարարական խնդիրների լուծման ուղղությամբ:

2. Կատարելագործել մասնակիցների կազմակերպչական և գործնական ունակությունները տարահանման միջոցառումների ժամանակ:

ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ – ԱՌԱՋԱԴՐԱՆՔ – Ըստ սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության հայտնած տվյալների,2019 թ.դեկտեմբերի 9-ին ժամը 11^{00}-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում տեղի է ունեցել երկրաշարժ՝ 5-6 բալ ուժգնությամբ:Ստորգետնյա ցնցումները շարունակվում են և հնարավոր է երկրաշարժի կրկնություն՝ ավելի ուժգին հզորությամբ:Ելնելով ստեղծված իրավիճակից,Գավառ քաղաքի շենքերում և շինություններում գտնվող անձանց

անհապաղ պետք է տարահանել շինություններից:Արդեն իսկ գրանցվել են թեթև ավերածություններ,շենքերում գտնվողներից ոմանք վիրավորվել են:

ՈՒսումնավարժության անցկացման կարգը – Անցկացվում է մեկ փուլով,մեկ ժամ տևողությամբ:

ՈՒսումնավարժության մասնակիցները ներկայացնում են զեկույցներ իրենց ստորաբաժանման աշխատակիցների տարահանման,հետախուզական աշխատանքների կազմակերպման,արդյունքների և այլ գործողությունների, իսկ փրկարար ուժերն ու աղետների բժշկության խումբը՝ իրենց մասով կատարած աշխատանքների մասին:

Արդյունքները ամփոփում և գնահատում է ՀՀ Գեղարքունիքի մարզպետը:

Ստեղծված իրավիճակը համարել պայմանական,ուսումնական նպատակով խաղարկվող:

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

18.11.2019

Ստորագրիչ: KHLGHATYAN SEVAK 4007580049

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ